«ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ»

Արդեն սկսվել է հողագործության շրջանը և արդիական է դառնում թունաքիմիկատներով թունավորումների խնդիրը: Այս առումով ՀՀ առողջապահության նախարարությունը ևս մեկ անգամ զգուշացնում է՝

Թունաքիմիկատներ գնելիս՝

1) **Հետևե՛ք** թունաքիմիկատի օգտագործման, անվտանգ չափաքանակների և առաջին օգնության միջոցառումների վերաբերյալ հրահանգներին, որոնք նշված են պիտակի վրա,
2) **Մի՛ գնեք** թունաքիմիկատներ, որոնց մակնշումը բացակայում է կամ գրված է Ձեզ համար անհասկանալի լեզվով:

Թունաքիմիկատներով թունավորումները կանխարգելելու նպատակով.

1) **Լվացե՛ք և պահե՛ք** թունաքիմիկատով աղտոտված հագուստը առօրյա հագուստից առանձին,
2) **Տեղադրե՛ք** նախազգուշացնող ցուցանակներ՝ մարդկանց մուտքը թունաքիմիկատով մշակված տարածք արգելելու նպատակով,
3) **Մի՛ պահեք** թունաքիմիկատները և հեղուկացիր սարքավորումները պատահական վայրերում,
4) **Պահե՛ք** թունաքիմիկատները սննդամթերքից հեռու, երեխաներին ոչ մատչելի վայրերում,
5) **Մի՛ պահեք** թունաքիմիկատները պարենային ապրանքների համար նախատեսված տարաներում՝ լիմոնադի շիշ և այլն,
6) **Մի՛ օգտագործեք** թունաքիմիկատներ, որոնք թույլատրված չեն մշակաբույսերի պաշտպանության նպատակով օգտագործման համար,
7) **Պահպանե՛ք** մշակումից հետո թունաքիմիկատի համար նախատեսված սպասման ժամկետը՝ դաշտ մտնելիս և թունաքիմիկատով մշակված մթերք օգտագործելիս,
8) **Մի՛ իրականացրեք** թունաքիմիկատներով մշակումը քամոտ, մառախլապատ եղանակին կամ քամու հակառակ ուղղությամբ,
9) **Պատրաստե՛ք** թունաքիմիկատի խառնուրդը լավ օդափոխվող տարածքում,
10) **Օգտագործե՛ք** անհատական պաշտպանիչ միջոցներ (հատուկ արտահագուստ, դիմակ, ձեռնոց, ակնոց, երկարաճիթ կոշիկներ) թունաքիմիկատի հետ աշխատելիս,
11) **Մի՛ փչեք** հեղուկացրի (ներարկիչ սարքի) խցանված ծայրադրի մեջ,
12) **Օճառով լվացե՛ք** ձեռքերը և դեմքը թունաքիմիկատի օգտագործումից հետո՝ նախքան սնունդ ընդունելը, ծխելը կամ սանհանգույցից օգտվելը,
13) **Լվացե՛ք** թունաքիմիկատով աղտոտված մաշկը և հագուստը առատ ջրով և օճառով,
14) **Օգտագործեք** սարքին, արտադրական և այլ թերություններ չունեցող սարքավորումներ: